է և եպս.ը կը կոչուի Կարուց. իսկ՝ ըստ Լանկլուայի հրատարակութեան՝ Խէ. եւ եպս.ը Կարնոյ. (Տաշ. Ցուց. էջ 157)։ — Կոստանեանց եւս ունի կարուց թուղթ ԿԳ. (Գր. Մագիստրոսի թուղթերը, էջ 145, տպ. Աղեքսանդրապոլ)։

ԿԻՐԱԿՈՍ ԳՐԻՉ.— Կտուց անապատի ձեռագիր Աստուածաշունչի մը մէկ մասը Երուսաղէմի Ս. Փրկիչ վանքին մէջ ընդօրինակուած է, սկսեալ ԺԲ. Մարգարէից գիրքերէն. որոնցմէ վերջ գրուած է սա յիշատակարանը. «Գրեցաւ գիրքս յերուսաղէմ. ընդ հովանեաւ Սբ. Փրկչիս և այլ բազմահաւաք սուրբ տնաւրինակոնացս, ձեռամբ մեղապարտ և փցուն գրչի Կիրակոսի. ի վայելումն և յիշատակ հոգւոյ սուրբ հաւրս մերոյ Ներսէսի և Առաջնորդի սուրբ ուխտիս. և արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով և աւրինակելով, յիշեսջիք ի Տէր զվերոյգրեալ ստացաւղ սորա զՆերսէս հայրն և ըզծնաւղսն իւր զփոխեցեալսն ի Քրիստոս զհայրն իւր զԳրիգոր քահանայն և զմայրն իւր զՇնոֆոր և զհարազատ իւր... երէց և զմեծ երէց ընդ նմին և զկարապետ քահանան եւ զՎարդան և զՑոհան և զբարեպաշտ Շահնայն. զՍարգիսն և ընդ նոսին յիշեսջիք ի տէր և զեղբայրն իւր զՊարոն Զոքինն և Աստուած մեզ յիշելեացս և ձեզ յիշողացդ առ հասարակ ողորմեսցի և նմա փառք յաւիտեանս ամէն.». «գրեցաւ ի թվին Հայոց ՊԺԲ (= 1363) մարտ ամսոյ ԻԴ. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն.» (Լաս. Ցուց. Թ. 27. էջ 18)։

ԿԻՐԱԿՈՍ ԳՐԻՉ.— ՌԿԳ (= 1614) թուին, Գր. պտրք. Պաւլոնտէրի ժամանակ, Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Մկրտութեան, ամուսնութեան և խոստովանութեան վերաբերեալ կանոնները պարունակող ձեռագիր մը (ՄՁ. Թ. 973)։

ԿԻՐԱԿՈՍ ԴՊԻՐ.— ՌՃՁԳ (= 1734) ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ քարոզգիրք մը Պոլսեցի Պօղոս վրդ. ի համար. իսկ ՌՃՁԶ (= 1737) ին ալ, Եփրեմի Աղօթագիրքը (ՄՁ. Թ. 1441)։

ԿԻՐԱԿՈՍ ԿԹՂ. ՍՍՈՑ (ՄԵԾ) ԱՋԱՊԱՀԵՍՆՑ.— (1797-1823) եղբօրորդի տէր Թէոդորոսի և որդի մահ. Գրիգորի, (Ազգպտմ. էջ 3614), 1803ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. Սսոյ Ջեռադրաց Մատենադարանին ՉԿ = 1311 թուականին գրուած ձեռնադրութեան ձեռագիր Մաշտոցի մը մէջ Կիրակոս